# ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## Բյուջեում նախատեսվող փոփոխությունների

Հաշվի առնելով, որ համայնքի 2022 թվականի բյուջեն հաստատելուց հետո կան չնախատեսված եկամտատեսակներ և ծախսեր, ուստի անհրաժեշտություն է առաջացել կատարել փոփոխություններ և լրացումներ: Դրանք են՝

Եկամուտների գծով՝

Որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի «եկամուտների գծով՝ 1 718 817 900 դրամ» բառերը փոխարինել «եկամուտների գծով՝ 1 726 706 100 դրամ» բառերով:

- Տեղական տուրքերի տողում՝ գործառնական նշանակության փոփոխության տուրք 9000դրամ,
- Վարչական գանձումներ տողում՝ Հ.Սահյանի անվան մշակույթի տուն ՀՈԱԿ-ի ծնողական մուտքերը՝ 217500դրամ,
- Այլ եկամուտներ տողում՝ 7661 715 դրամ,

Ծախսերի գծով՝

Որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի «ծախսերի գծով՝ 2 263 086 100 դրամ» բառերը փոխարինել «ծախսերի գծով՝ 2 270 974 300 դրամ» բառերով:

- 4.2.4. /Ոռոգում/ ծրագրի 5112 հոդվածը ավելացնել՝ 2 500 000ՀՀ դրամ՝ Շաղատ, Շաքի Լոր, Շենաթաղ բնակավայրերում ոռոգման ջրագծի կառուցման աշխատանքների համար նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերման նպատակով,
- 1.1.1. /Օրենսդիր մարմինների պահպանում/ ծրագրով 5113 հոդվածը ավելացնել 200 000 ՀՀ դրամով՝ Շենաթաղի բնակավայրի վարչական շենքի տանիքի վերանորոգման աշխատանքների համար նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերման նպատակով,
- 6.3.1 /Ջրամատակարարում/ ծրագրի 5113 հոդվածից 5112 հոդված տեղափոխել 3 000 000 ՀՀ դրամ՝ Բալաք և Լծեն բնակավայրերում խմելու ջրագծի կառուցման աշխատանքների համար նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերման նպատակով,
- 4.5.1./Ճանապարհային տրանսպորտ/ ծրագրի 5113 հոդվածից 5112 հոդվածին ավելացնել 7 865 150դրամ Սիսիանի համայնքում թվով 10 կանգառների կառուցման և 950000 դրամ՝ Սիսական փողոցի բարեկարգման նպատակով նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերման նպատակով,
- 8.6.1 /Հանգիստ, Մշակույթ և Կրոն/ ծրագրի 5122 հոդվածը ավելացնել 2 200 860դրամով և 5129 հոդվածը 300 000դրամով՝ Շեն բարեգործական հասարակական կազմակերպության հետ համատեղ իրականացվող ծրագրի շրջանակներում, ծրագրի ընդհանուր արժեքը 16 672 400դրամ, որից համայնքի ներդրում՝ 2 500 860դրամ,
- 8.6.1 /Հանգիստ, Մշակույթ և Կրոն/ ծրագրի 5112 հոդվածը ավելացնել 5 206 010դրամ՝ խաղահրապարակի կառուցման աշխատանքների նպատակով,

- 8.6.1. ծրագրի 4237 հոդվածով ավելացնել 640 000դրամ՝ ծաղիկների ձեռքբերման, 4269 հոդվածը ավելացնել 250 000դրամով՝ ցանկապատ, Զորաց քարերի
- 4.7.3./Զբոսաշրջություն/ ծրագրի 4657 հոդվածը ավելացնել 2 321 020դրամով, Շվեյցարիայի զարգացման գործակալության և Գերմանիայի Դաշնության տնտեսական զարգացման և համագործակցության նախարարության կողմից Հայաստանի համայնքներին՝ COVID համավարակով պայմանավորված դժվարություններին դիմագրավելու համար հայտարարված դրամաշնորհային ծրագրի համաֆինանսավորման ավելացման նպատակով:

Համայնքի վարչական բյուջեի պահուստային ֆոնդից 44 800 000դրամ հատկացնել 8.2.7. ծրագրին՝ մինչև 2020 թվականը զոհված զինծառայողների շիրմաքարերի ձեռքբերման նպատակով:

**Ֆինանսատնտեսագիտական և սոցիալ-տնտեսական**

**զարգացման բաժնի պետի փոխարինող՝** **Լ.Հարությունյան**

**08.06.2022թ.**